ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ГОСУЧРЕЖДЕНИЙ АРМЕНИИ

UNION OF STATE, LOCAL GOVERNMENT AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF ARMENIA

«21» ապրիլի 2025թ.
N 26-01

**Երևանի քաղաքապետ**
**Տիգրան Ավինյանին**

Հարգելի պարոն Ավինյան

Համաձայն «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի՝ իրազեկում ենք Ձեզ, որ Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը 2025թ. մայիսի 1-ին կազմակերպում է խաղաղ հավաք Աշխատանքի օրվա կապակցությամբ:

Հավաքը կազմակերպվելու է Շարլ Ազնավուրի հրապարակում («Կինո Մոսկվայի» հարակից տարածք) ժամը 12:00-ից մինչև 13:00-ն

Հավաքի մասնակիցների սպասվող թիվը մոտ 500 է:

Հավաքի ժամանակ կօգտագործվեն բարձրախոս, դրոշներ և պաստառներ՝ «Մայիսի 1-ը՝ Աշխատանքի օր», «Սոցիալականը՝ նյութականից առաջ», «Մարդը գերագույն արժեք է», «Հարկային արդարությունը անհրաժեշտություն է», «Հանրային ծառայողներին արժանապատիվ աշխատավարձ», «Մեզ անհրաժեշտ է սոցիալական գործընկերություն», «Մենք ուզում ենք առողջապահական ապահովագրության արդար համակարգ» և այլ կարգախոսներով:

Կից ներկայացնում ենք պետական ռեգիստրում ճյուղային հանրապետական միության գրանցման վկայականի, միության նախագահի անձնագրի պատճենները և ճյուղային հանրապետական միության նախագահության որոշումը հավաք անցկացնելու մասին:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝
**Հայաստանի պետհիմնարկների,**
**ՏԻՄ-երի աշխատողների**
**նախագահ՝** **Անահիտ Ասատրյան**

հաստատված է էլ ստորագրությամբ